ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Հակոբյան

Ներկայացնում եմ հաշվետվություն 2023 թվականի առաջին եռամսյակում իմ կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ:

1. Վարչության ղեկավարության անմիջական մասնակցությամբ շարունակվել են «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի 2023-2030 թվականների ռազմավարության և գործողությունների պլանը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը կազմելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հաշվի առնելով, որ նախագծի վերջանական տարբերակը ներկայացնելու համար ժամկետ է սահմանված 2023 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակը, վարչությունը 2023 թվականի փետրվարի 16-ին նախագիծը ներկայացրեց ՀՀ փոխվարչապետի գրասենյակ նախնական կարծիք ստանալու համար:

Ներկայումս ՀՀ առանձին մարզպետարանների, նախարարությունների, գերատեսչությունների, մարզաձևերի հանրապետական և միջազգային ֆեդերացիաների հետ կատարվում են աշխատանքներ գրասենյակի կողմից նշված թերությունները վերացնելու ուղղությամբ:

2. Ուսումնասիրվել և վարչության ղեկավարությանն է ներկայացվել՝
- Ում կողմից են ֆինանսավորվում մարզաձևերի ազգային ֆեդերացիաները տարբեր երկներում:
- Տարբեր երկներում պետական բյուջեից ֆիզկուլտուրային-մարզական հասարակական կազմակերպություններին ֆինանսական աջակցություն հատկացնելու կարգը:
- «Սպորտլոտո» մարզական դրամական վիճակախաղի արդյունավետության և Հայաստանում ներդնելու նպատակահարմարության մասին ուսումնասիրությունների արդյունքները:
- Ազգային հավաքականներում ընդգրկված մարզիկների նախապատրաստման համալիր գիտական խմբի գործառույթները:
- Մասնագիտական կարծիք-եզրակացություն «Մարզական մրցումների ժամանակ մեքենայությունների մասին» Եվրոպայի խորհրդի Կոնվեցիան ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացնելու նպատակահարմարության մասին:

Մասնակցություն եմ ունեցել մարզաձևերի ազգային ֆեդերացիաների տարեվերջյան հաշվետվությունների ընդունման հանձնաժողովի աշխատանքներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
03.04.2023թ.

Սպորտի քաղաքականության վարչության
փորձագետ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԱՎՐՅԱՆ